

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՇԵՂՅԱՆ ԱԼՔԵՐՏ

## ԵՂԻՇԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԵՐՍԸ

1944թ. ապրիլի 10-ին, հանդես գալով ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստում «Ժամանակագրական խնդիրներ հայոց հին մատենագրության մեջ» թեմայով<sup>1</sup>, ակադեմիկոս Ստ.Մալխասյանցը V դ. նշանավոր հեղինակների երկերի գրության ժամանակը որոշելու համար առաջ քաշեց մի բոլորովին նոր և բավական լուրջ փաստարկ. «Աչքի ընկնող երևույթ է, որ մինչև V դարի վերջերը գրող հեղինակներից Փավստոսը, Խորենացին, Փարպեցին շատ լավ գիտեն Ագաթանգեղոսին, հաճախակի հիշում են Գրիգոր Լուսավորչին, - մատնանշում է անվանի հայագետը, - այնինչ նույն դարի առաջին կիսում գրող հեղինակները, մինչև Եղիշե ներառյալ, ոչ Ագաթանգեղոսին գիտեն և ոչ Գրիգորի անունն են տալիս: Կորյունը, որ գրել է «Վարք սրբոյն Մեսրոպայ», որի մեջ հաճախ հիշում է Սահակ կաթողիկոսին՝ ոչ մի անգամ չի հիշատակում, թե նա Գրիգոր Լուսավորչի զարմից է/.../ Նա Գրիգորին չգիտե»<sup>2</sup>:

Ըստ Մալխասյանցի, Ագաթանգեղոսին չգիտե նաև Եղիշե պատմիչը, և այս ցույց տալու համար նա Եղիշեի Վարդանանց Պատմությունից բերում է մի շատ ուշագրավ դրվագ: 451թ. Ավարայրի ծակատամարտից առաջ «հայոց եկեղեցական-քաղաքական ժողովը, - գրում է Ստ. Մալխասյանցը, - Հովսեփ եպիսկոպոսի գլխավորությամբ, Վասակ մարզպանի, Ներշապուռի Ռմբոսյանի, Վարդան սպարապետի մասնակցությամբ, պաղատանքի թուղթ են գրում Թեոդոս Փոքր կայսրին, օգնություն խնդրելով պարսիկների դեմ: Թղթի մեջ հիշում են, թե մեր նախնին՝ Տրդատը, մանկության հասակում իր հայրասպան հորեղբայրներից փախչելով ապավինեց Հռոմ և Հռոմի ս. եպիսկոպոսից ընդունեց հավատն ի Քրիս-

<sup>1</sup> ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1944, N 6-7, էջ 7-24. - Ստ.Մալխասյանց, Բանասիրական հետազոտություններ, Երևան, 1982, էջ 9-32:

<sup>2</sup> Ստ.Մալխասյանց, էջ 12-13:

տոս և լուսավորեց հյուսիսային երկրները<sup>1</sup>: եղիշեի հաղորդած այս տեղեկությունը, - եզրակացնում է Մալխասյանցը,- ամբողջապես խորտակում է Ագաթանգեղոսի Պատմության հիմքը<sup>2</sup>: Այստեղ ոչ Անակ կա, Գրիգորի հայրը, Խոսրով թագավորին սպանող, այլ Խոսրովի եղբայրներն են նրան սպանել, ոչ Գրիգոր կա, Տրդատին մկրտող և Հայաստանը քրիստոնեության դարձնող, այլ Հռոմի եպիսկոպոսն է նրան քրիստոնյա դարձրել»<sup>3</sup>: Եվ Մալխասյանցը կտրուկ եզրափակում է. «Եղիշեի Պատմությունը գրված ժամանակ Գրիգորը անհայտ էր հայ ժողովրդին, ուրեմն դեռ չկար Ագաթանգեղոսի պատմությունը, որն առաջինն ստեղծեց Գրիգորին իբրև Հայաստանի լուսավորիչ»<sup>4</sup>:

Այս հարցին անդրադարձել է Մալխասյանցը նաև Փավստոս Բուզանդի Հայոց Պատմության աշխարհաբար թարգմանության ներածության մեջ: «Աչքի ընկնող երևույթ է, - մատնանշում է նա, - որ Կորյունը, որն այնքան հաճախ ու մեծ պատկառանքով հիշում է ս.Սահակ կաթողիկոսին, ոչ մի անգամ Գրիգոր Լուսավորչի անունը չի տալիս, լուսավորիչի հիշատակում, որ իր սիրած ուսուցիչը՝ Հայաստանի լուսավորիչը, պանծալի ծագում ունի, Գրիգոր Լուսավորչի զավակն է, նրա թռռան թռռնորդին, ինչպես գիտեն և կրկնում են Խորենացին ու Ղ.Փարպեցին: Սա նշանակում է, որ Կորյունը դեռ Գրիգոր Լուսավորչին չի ծանաչում»:

Բայց Ստ.Մալխասյանցի այս փաստարկը XX դ. բարոյախոսականից է, երբ օրինաչափ է համարվում նախնիներով պարծենալը և նրանց արժանիքների շուքի տակ ապրելը: IV դ. քրիստոնեության նշանավոր վարդապետներից Բարսեղ Կեսարացին իր մի ծառում խրատում է. «Նայի՛ր քեզ!.../ որպէսզի մոլորութեամբ առաւել հպարտանալով չհասնես ամբարտաւանութեան եւ անգիտութեամբ չընկնես յետին տրտմութեան մէջ: **Փշում ես հարստութեամբ եւ մեծամտանում նախնիներով /.../ Նայի՛ր քեզ /.../»**<sup>5</sup>: Այս է պատճառը, որ Կորյունը Մաշտոցի Վարքում հիշատակում է Մեսրոպ Մաշտոցի աննշան հորը՝ Վարդանին, որին Փավստոսը Վրիկ է անվանում, բայց չի հիշատակում Սահակ Պարթևի նշանավոր հորը՝ Ներսես Մեծ կաթողիկոսին:

1 Հմմտ. Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957. էջ 72 (այսուհետ՝ Եղիշէ):

2 Եղիշեի հաղորդածը նույն կերպ է ընկալել և Ն. Ադունցը. «Տրդատի հոր՝ Խոսրովի սպանողներն իր հարազատ եղբայրներն են եղած, մի հանգամանք, որ խախտում է Ագաթանգեղոսի պատմության հիմքը» (Ն. Ադունց, «Երկեր», 2006, Ա, էջ 173):

3 Ստ. Մալխասյանց, էջ 13:

4 Նույն տեղում, էջ 14:

5 «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. է, Երեւան, 2002, էջ 224:

Ծարունակելով իր սևեռուն գաղափարը, Մալխասյանը նույն կերպ է բացատրում նաև Գրիգոր Լուսավորչի անվան բացակայությունը Եղիշեի Վարդանանց Պատմության մեջ. «Նույն երևույթը տեսնում ենք և Եղիշեի մոտ: Մինչ Ղ.Փարպեցին առաջին կրոնական պատերազմի պատմության մեջ քանիցս հիշում է Գր.Լուսավորչին, Եղիշեն ոչ մի անգամ նույն անցքի պատմության մեջ չի հիշում: Նույնիսկ Ղևոնդ Երեցի ընդարձակ քարոզի մեջ, պատերազմի նախօրյակին, երբ սա հիշեցնում է բարեպաշտ մարդկանց օրինակներ Յին Կտակարանից, և երբ անշուշտ պահանջվում էին հիշյալ Գրիգորի կրած չարչարանքները, Չայաստանի՝ քրիստոնեական լուսավորելը, Ղևոնդն էլ զանց է անում այս անունը»<sup>1</sup>:

Եվ այստեղ Մալխասյանը կրկին հիշում է Եղիշեից Չայոց ժողովի Թուղթը Թեոդոս Փոքր կայսրին, ըստ որի Չայոց Տրդատ թագավորը՝ Յոռմի եպիսկոպոսից (և ոչ թե Գրիգոր Լուսավորչից) է ընդունել քրիստոնեություն: Ուրեմն Եղիշեն ևս, որ Վարդանանց Պատմությունը գրել է 461 թվին՝ Պարսից Պերոզ թագավորի գահակալության 5-րդ տարում, Գրիգոր Լուսավորչին դեռ չգիտե: «Սրա պատճառն այն է, - եզրակացնում է անվանի հայագետը,- որ Գրիգոր Լուսավորիչը իր վսեմ կերպարանքով, իբրև խոստովանող, իբրև Չայաստանի լուսավորիչ և առաջին կաթողիկոս, առաջին անգամ ստեղծվել է Ազաթանգեղոսի անունը կրող լեգենդար պատմության մեջ, իսկ մինչ այդ, մոտ 180 տարի, նրա անձնավորությունը մնացած է եղել մթության մեջ»<sup>2</sup>: Եվ քանի որ Ազաթանգեղոսի Պատմությունը 461թ. դեռ չկար, ապա նրա գրության ժամանակը Մալխասյանը դնում է 461-465 թվականներին:

Գրեթե չորս տասնամյակ անց, նույն փաստարկներով ու եզրակացությամբ է անդրադառնում V դ. այս պատմական ու դավանաբանական հարցադրումներին նաև պատմագիտության դոկտոր Արտաշես Մարտիրոսյանը իր «Մաշտոց» մենագրության մեջ՝ կրկնելով նախորդի սխալները, բայց և չհիշատակելով նրա անունը. «Լուսավորչի պաշտամունքը հայ Արշակունիների անկումից հետո միանգամից չսկսվեց, այլ միայն V դարի վերջին տասնամյակներին, - իր նախորդ անվանի հետազոտողին հետևելով՝ հայտարարում է վերջինս,- Կորյունը Լուսավորչի մասին ոչինչ չգիտե, կամ ոչինչ չի ասում, բայց նա կարող էր և կային առիթներ, իսկ Սահակի դերը նրա մոտ համեստ է ու անքնաձիգ»: Եվ անմիջապես էլ քննադատը նույն ոգով, բայց և իր ուրույն, ինքնատիպ ոճով շա-

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն Չայոց, թարգմանությունը. ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968 (այսուհետ՝ Բուզանդ), էջ 36 (ներածություն):

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 36-37:

րունակում է. «Լուսավորչի մասին լռում է և Եղիշեն, որի պատմությունը գրված է շուրջ 458-60 թվականներին: Եղիշեն նույնպես կարող էր առիթ գտնել նրա անունը տալու, ասեմք Միհրնեսրեսիին հղած պատասխանի մեջ, որտեղ ասված է, որ անդավաճան են Քրիստոսի հավատին: Պետք է լիներ՝ և Լուսավորչի»<sup>1</sup>: Եվ այստեղ Ա.Մարտիրոսյանը կրկին վկայակոչում է Հռոմի սուրբ եպիսկոպոսապետից հավատն ընդունած Տրդատիոս թագավորի դրվագը Թեոդոս կայսրին հղած Թղթից, որ բերում է Եղիշեն Վարդանանց Պատմության մեջ. «Նախնին մեր Տրդատիոս, յիշելով զառաջին սէրն ձեր, - գրում են Թեոդոս կայսեր ապստամբ եպիսկոպոսներն ու նախարարները, - որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հորեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրիդ Յունաց, և ի ձէնջ թագաւորեալ տիրէր հայրենի աշխարհիս, սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ, լուսատրեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին ի մէնջ կորգել հանել խաւարասէր որդիքն Արևելից»<sup>2</sup>:

Տրդատ Մեծի հոր՝ Խոսրով Մեծի (կամ Ա-ի) սպանության հարցին անդրադարձել է և ակնավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը. «Թե ի՛նչ պարագաներում էր սպանված Խոսրով Բ-ը»<sup>3</sup> այդ պարզ չէ, որովհետև այդ մասին մենք ունենք տարբեր ավանդություններ: Ըստ Ագաթանգեղոսի՝ նրան սպանել էր տվել դավով Արտաշիրը Անակ Պարթևի ձեռով, և Խոսրովի որդիներից ազատվել էր միայն մանկիկ Տրդատը. որին դայակները փախցրել էին Հռոմեական երկիրը: Իսկ Եղիշեի վկայությամբ՝ Տրդատին տղայության հասակում տարել էին Հռոմայեցոց երկիրը, ազատելով նրան «ի հայրասպան մարդախողխող հորեղբարցն իւրոց»: Եղիշեի այս վկայությունը, որ մեջ է բերված հայերի Թեոդոս կայսրին գրած նամակում, հավանորեն, ավելի մոտ է ծմարտության, քան Ագաթանգեղոսի վիպական պատմվածքը: Ուստի և կարելի է թերևս ենթադրել, որ մանկիկ Տրդատի փախուստից հետո քաղաքական իշխանությունը Հայաստանում իրենց ձեռքն էին ձգել Խոսրով Բ-ի եղբայրները»<sup>4</sup>: Այստեղ, Հ.Մանանդյանին ևս թյուրիմացության մեջ է դրել Եղիշեի «հայրասպան հորեղբարցն» արտահայտությունը: Ինչպես ասվեց, Եղիշեն պարզապես վերապատմում է Ագաթանգեղոսի Պատմության առաջին գրքում իր ընթերցածը՝ դավադիր Անակի ձեռքով Խոսրով Մեծի սպանության մասին: Անակը և նրա հարազատ եղբայրը նույնպես

<sup>1</sup> Ա.Մարտիրոսյան, Մաշտոց, Երևան, 1982, էջ 227-228:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 228:

<sup>3</sup> Հ.Մանանդյանը նկատի ունի Տրդատ Մեծի հորը՝ ավանդական Խոսրով Մեծին:

<sup>4</sup> Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 104-105:

սպանվեցին մահամերձ խոսքով Մեծի հրամանով վրեժխնդիր հայ նախարարների ձեռքով, ուստի անհիմն է այն հետևությունը, թե մանկիկ Տրդատի փախուստից հետո «քաղաքական իշխանությունը Հայաստանում իրենց ձեռքն էին ձգել խոսքով Բ-ի եղբայրները»: Պատմաբանն ակներև տարբերություն է դնում խոսքով Բ-ի եղբայրների և մանկիկ Տրդատի հորը սպանողների, այն է՝ հորեղբայրների միջև:

Հակառակ հայագիտության մեջ այժմ իշխող տեսակետի, Հայոց ժողովի թուղթը առ թեոդոս կայսր լուրջ կռվան է ծառայում հաստատելու, որ այն շարադրող պատմիչը քաջ իրազեկ է Ազաթանգեղոսի Պատմությանը, քանզի նրանում տեղ են գտել Հայոց Տրդատ թագավորին վերաբերող այնպիսի մանրամասներ, որոնք Ազաթանգեղոսի Պատմության բուն բովանդակությունն են կազմում: Այն փաստը, որ Տրդատի հորը՝ Հայոց խոսքով Մեծ թագավորին սպանողը նրա հորեղբայրներն են եղել, որոշ բանասերների առիթ է տվել ենթադրելու Եղիշեի օգտագործած մի այլ Ազաթանգեղոսից տարբեր պատմական ավանդություն, սոսկ այն պատժառաքանությամբ, թե Հայոց խոսքով թագավորին սպանող Պարթև Անակը չէր կարող խոսքովի եղբայրը լինել և, ուրեմն, Գրիգոր Լուսավորիչն էլ Պարթևի որդի չէր, այլ-կապաղովկացի հույն: Ովքեր փորձում են վերանայել Գրիգորի ազգության հարցը և նրան չեն համարում Պարթև Անակի որդի, դրանով իսկ Գրիգոր Լուսավորչի անձնավորության և նրա Կեսարիայում հայտնվելու հարցը քննելիս հեռանում են բուն հայկական պատմական ավանդությունից, մինչդեռ Եղիշեի աղերսը Ազաթանգեղոսի հետ և մասնավորապես խոսքովի ու Անակի եղբայրների լինել-չլինելու հարցը պետք է դիտել հենց այդ ավանդության շրջանակներում: Հակառակ արտահայտված տարակուսների, Եղիշեն միանգամայն ժշգրիտ է արտացոլում հայ պատմական ավանդույթը և այնքան հարազատ է վերարտադրում Ազաթանգեղոսի մեր այսօրվա բնագիրը, որ հիշյալ թղթում կարելի է մի առ մի մատնանշել բոլոր ազաթանգեղյան պարբերությունները, որտեղ ընթերցողը կգտնի Եղիշեի հաղորդածը բառացի նույնությամբ և հաջորդականությամբ.

«Վասն որոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հորեղբարցն իւրոց (հմմտ. Ազաթ., «32») ապրեալ սնաւ յերկրիդ Յունաց (Ազաթ., «36,37), և ի ձէնջ թագաւորեալ (Ազաթ., «46) տիրէր հայրենի աշխարհիս (Ազաթ., «47), սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ (Ազաթ., «820-826), լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին ի մէնջ կորզել հանել խաւարասէր որդիքն արևելից»:

<sup>1</sup> Եղիշե, էջ 72:

Անհնար է այլապատում աղբյուրից օգտվելով՝ այսպես հարազատ մնալ Ազաթանգեղոսին, այն էլ՝ հետագայում շարադրված Ազաթանգեղոսին: Որ Տրդատի հորեղբայրներն են խողխողել նրա հորը՝ Խոսրով թագավորին, եղիշեն քաղել է ուղղակի Ազաթանգեղոսի հետևյալ խոսքից. «Իբրև զայն յէր Պարթևն (Անակ)՝ զերդումն ուխտին յիշէր/.../ առնոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ՝ իբրև ի պատճառս ինչ զքօսանաց, իբրև խորհուրդ ինչ խորհել ընդ նմա. և զսուսերսն պողովատիկս թերաքամեալս ունէին. յանկարծ յեղակարծումն ժամանակի զէնս վերացուցեալ՝ զթագաւորն դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէին»<sup>2</sup>: Ինչպես տեսնում ենք, ըստ Ազաթանգեղոսի, Տրդատի հայր Խոսրով Մեծին սրախողխող արեցին երկու հոգի՝ Պարթևական տոհմի նահապետ Անակը և իր հարազատ եղբայրը, որոնք իբրև Արշակունիներ՝ Հայոց Խոսրով Արշակունի թագավորի եղբայրներն էին, դրա համար էլ եղիշեն նրանց Տրդատի *հորեղբայրներ* է անվանում, դարձյալ Ազաթանգեղոսի հաղորդած տեղեկության հիման վրա: Ոչ այլ ոք, քան Ազաթանգեղոսն է երկու անգամ հաստատում, թե Պարթևները ազգատոհմով ու *բնութամբ* (ի բնե) Հայոց Արշակունի Խոսրով թագավորի *եղբայրներն էին*. «Ձի թէպէտ և էր ինքն (Խոսրով) ի մեծի տրտմութեան վասն բնութեան *եղբայրութեան* ազգատոհմին/.../ սակայն տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւնն իւրեանց ազգատոհմին և *եղբայրութեանն*»<sup>3</sup>:

Իրողությունն այն է, որ հայ հին մատենագրության մեջ «եղբայր» բառը գործածվում էր նեղ և լայն իմաստով՝ նեղ իմաստով «եղբայրներ» էին կոչվում նույն ծնողների որդիները (իմա՝ հարազատ եղբայրները - Ա.Մ.), իսկ լայն իմաստով՝ առհասարակ տոհմակիցները: Լայն իմաստով «եղբայր» բազմիցս հանդիպում է ոչ միայն Ազաթանգեղոսի, այլև Փավստոս Բուզանդի մոտ. այսպես, Մագքթաց Արշակունի Սանեսան թագավորին երկու անգամ պատմիչն անվանում է Հայոց Խոսրով (Փոքր) թագավորի եղբայր՝ «Քանզի և Ոցա և Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան» (Գ, 2, էջ 26), այսինքն երկուսն էլ Արշակունյաց ազգատոհմից էին. «Եւ խոյս ետ թագաւորն Հայոց Խոսրով

<sup>1</sup> Պահլավերեն - պարսկերեն - հայերեն - ռուսերեն - անգլերեն բառարան, Կազմեց Ռ.Արրահամյանը, Երևան, 1965, էջ 18 («Անակ» պահլավերենում բառացի նշանակում է «չարագործ»):

<sup>2</sup> Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ.Տէր-Սկրտչեան և Ստ.Կանայեանց, Տփղիս, 1909 (այսուհետ՝ Ազաթ.), «32, էջ 22 :

<sup>3</sup> Նույն տեղում, «20, էջ 17:

յիւրմէ եղբարցն, նոյն 'ի Սանէսանայ յարքայէն Մագքթաց. և անկան յամուր բերդն Դարենից յերկիրն Կովգայ, և ընդ նմա ծերունին Վրթանէս եպիսկոպոսապետն Դայոց» (Գ, է, էջ 28). «և զգլխն Սանէսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Դայոց: Սակայն իբրև ետես, լալ սկսամ/.../ ասէ. եղբայր իմ էր ազգաւ Արշակունի» (Գ, է, էջ 30): Զարմանալին այն է, որ ինքը Մալխասյանցը քաջ ծանոթ է գրաբարում «եղբայր» բառի ունեցած լայն և նեղ իմաստներին, և Փալստոս Բուզանդի Դայոց Պատմության աշխարհաբար թարգմանության մեջ անդրադարձել է այդ հարցին՝, սակայն եղիշեի Պատմության մեջ նույն երևույթին հանդիպելով՝ դրսևորում է բոլորովին այլ վերաբերմունք:

Այժմ անդրադառնանք Ստ.Մալխասյանցի մյուս փաստարկին. իսկապե՞ս եղիշեն, նրա հետ և Դայոց Եկեղեցու գլխավոր Դովսեփ եպիսկոպոսն ու Դայոց մեծամեծները 450 թ. պատկերացում չեն ունեցել Գրիգոր Լուսավորչի գոյության մասին, Թեոդոս կայսրին տեղեկացնելով, թե իրենց նախնի Տրդատ թագավորը Դոմի եպիսկոպոսապետից է ընդունել քրիստոնեական հավատը - այսպիսի հարցադրումը միայն տարակուսանք կարող է հարուցել: Եթե հայ եպիսկոպոսներն ու նախարարները 451թ. Ավարայրի ծակատամարտի նախօրեին դիմում էին Դոմոնոց կայսրին՝ օգնություն խնդրելու ընդդեմ պարսիկների, ապա նրան շահագրգռելու համար ուրիշ ի՞նչ պետք է հիշեցնեին, եթե ոչ պատմական այնպիսի փաստեր, որոնք ցույց տալին հայերի և հռոմեների (քրուզանդական հույների) ավանդական հավատակցությունն ու դաշինքը՝ որ այն հավատը, ինչին սպառնում էր զրադաշտական կրոնը, հայերն ընդունել են Դոմի եպիսկոպոսապետից, և որ Դայոց Տրդատ թագավորը մանկությունից սովորել է Դոմնաց երկրում և հույների օգնությամբ տիրել հայրենի գահին, ապա և բարեկամության դաշինք կռել Կոստանդիանոս Մեծ կայսեր հետ, որը հաստատելու համար ժողովի գլխավորները ներկայացնում են հին «անսուտ հիշատակարաններ»: Դոմի կայսեր և եպիսկոպոսապետի համար օրինակ կարող էին ծառայել իրենց նախնիների առաքինի գործերը: Ի՞նչ իմաստ կունենար, եթե Թեոդոս կայսրից օգնություն հայցող հայերը իրենց Թղթում գրեին, թե իրենք քրիստոնեությունը ընդունել են Գրիգոր Լուսավորչից, այն էլ Պարթևից: Մի՞թե դա պիտի ոգեշնչեր կամ հուզեր Դոմի կայսրին՝ տեր կանգնելու Դայոց հավատին, մինչդեռ պաղատանքի Թղթի հեղինակները շատ ավելի լավ էին պատկերացնում պահի և տագնապի լրջությունը և մերօրյա քննադատներից շատ ավելի լավ էին հասկանում, թե ինչ հանգա-

<sup>1</sup> Ստ.Մալխասյանցի կարծիքը «եղբայր» բառի նեղ և ընդարձակ նշանակությունների մասին տե՛ս Բուզանդ, ծան.17- էջ 421 և ծան.217- էջ 445:

մանքներ հիշեցնելով կարող էին շարժել Յոզմի կայսեր քրիստոնեական նախանձախնդրությունը:

Եղիշեի հաղորդածին հարևան մի վկայություն ունենք ավելի վաղ շրջանից. 431թ. Եփեսոսի եկեղեցական ժողովից հետո Կոստանդնուպոլսի Պրոկո եպիսկոպոսին (պատրիարքին) հղած իրենց պատասխան թղթում Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը նույնպես հիշեցնում էին. թե հայերը ի սկզբանե քրիստոնեական հավատքն ընդունել են Յոզմոց վարդապետներից՝ «Արդ պահպանութիւն զմեք առեալ զազնականութիւն աղաթից ձերոց սրբութեանդ, հաստատեալք և զարացեալք պահել զհաստաթութիւն հաւատոյ, զոր *ի սկզբանէ ի ձեր ճշմարիտ վարդապետութենէդ ընկալեալ ունէաք*»<sup>1</sup>:

Իսկ որ Եղիշեն Տրդատին է վերագրում քրիստոնեական հավատը հյուսիսի կողմերում (իմա՝ Հայաստանում – Ա.Ս.) տարածելու գործը, դրանում ևս զարմանալու ոչինչ չկա: Անգամ պատանի Մովսես Խորենացին, որ նույնպես Սուրբ Գրիգորին համվանե չի հիշատակում, Տրդատ արքային համեմատում է առաքյալի հետ, որ «*լնոյր անտարանին լուսով զհայրենեացն զտէրութիւնն*» և «*առաքելաջան հանդիսիւ լուսաւորէր զարևելս երրորդութեանն լուսով*»<sup>2</sup>, իսկ քիչ հետո նույն կերպ փառաբանում է Կոստանդիանոս կայսեր և Տրդատ արքայի առաքելական ջանքերը. «*../սուրբ և յաղթող կայսրն Կոստանդիանոս՝ գործակից մերոյ արքային եղեալ Տրդատայ, զբազմաստուածութեանն առ հասարակ ջնջեցին զվրդովմունս, խաղաղութիւն արարեալ բոլոր աշխարհիս. և զլոյս անտարանին առաքելաբար յանձինս ընկալեալ, տիեզերասաստ զօրութեամբ նուաճեցին զընդ երկնաւս ՚ի հնազանդութիւն ընդ թագաւորութեամբ վերնոյն*»<sup>3</sup>: Ավելի ուշ Պատմահայրը՝ բանիբունքնելով Ագաթանգեղոսի Պատմությունը, իր Հայոց Պատմության մեջ համեմատում է Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի դերը հավատի տարածման գործում և շեշտում թագավորի առավելությունը. «*Այլ գառաւելութիւն ասեմ աստ զթագաւորին. քանզի խորհելն յաղագս Աստուծոյ և ժգնագեցեցիկն լինել՝ զոյգ երկոցունց. իսկ նուաճել հաւանողական կամ բռնաւորական բանիւ՝ առաւել էր թագաւորին շնորհ. քանզի ըստ հաւատոցն ոչ ինչ կասեցուցանէր զգործսն*»<sup>4</sup>:

<sup>1</sup> «Սովիեք հայկականք», հ. Բ, Վենետիկ, 1853, էջ 138-139: Նույն տե՛ս Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 9:

<sup>2</sup> Ի յիշատակի սրբոյն Յոզիսիմեայ և նորում վկայակցացն, Ներբողեան ի հանդէս նոցա հրաշագարդ յօրինուածովք (այսուհետ՝ Խորենացոյ Մատենագրութիւնք), էջ 322:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 323-324:

<sup>4</sup> Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց. Աշխատութեամբ՝ Մ.Արեղեան եւ Ա.Յարութիւնեան, Տիֆլիս, 1913, գիրք Բ, ԴԲ, էջ 245-246:

Որ եղիշեն Տրդատի վերաբերյալ տվյալները իրոք քաղել է Ագաթանգեղոսի մեր ձեռքը հասած Պատմությունից, հաստատվում է և այլ զորեղ փաստարկներով, որոնք նույնպես վրիպել են մեր կորովի հայագետի և նրան հետևողների ուշադրությունից: Վերոհիշյալ Թղթում Հայոց ժողովի մասնակիցները, դարձյալ, իբրև անցյալ սերտ բարեկամության օրինակ, հիշեցնում էին Թեոդոս կայսրին, որ նրա առաջինի նախնիները, Եվրոպայում և Ասիայում վիթխարածավալ տերության հասնելով՝ այդչափ մեծ իշխանության մեջ **մեծ և սիրելի դաստակերտ էին անվանում մեր Հայոց աշխարհը**. «ունելով զԵւրոպէ՝ անցին և տիրեցին և Ասիացոց կողմանցն ի սահմանացն Սէիրայ մինչև ի կողմանս Գաղերովնի/.../ Եւյայնչափ մեծ իշխանութեան՝ **դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին**»<sup>1</sup>:

Եղիշեի և Ագաթանգեղոսի աղերսը ժխտող բանասերների համար միանգամայն անհավանական հայտնություն կարող է թվալ, եթե պարզվի, որ այստեղ ևս եղիշեի աղբյուրը Ագաթանգեղոսն է: Եվ, սակայն, դա այդպես է - Ագաթանգեղոսի Պատմությունն է այն Մատյանը, որ վկայում է, թե, իսկապես, դեռևս Տրդատ Մեծը իր հեթանոսության շրջանում, որ ճիշտ համընկնում է Թեոդոս Փոքր կայսեր **առաջինի նախնիների** ժամանակին, իր հրովարտակում նշում է, թե Հայոց աշխարհը կոչվելիս է եղել «դաստակերտ կայսերաց»: Այդպես կարդում ենք Տրդատ արքայի հրովարտակում, ուղղված Մեծ Հայքի ժողովրդին՝ մեծամեծներից մինչև շինականները - «քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս. իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիդ կայսերաց» (Ագաթ. § 127): Ուշագրավ է, որ «դաստակերտ/.../զՀայոց աշխարհս անուանէին» և «Վասն որոյ և նախնին մեր Տրդատիոս» հատվածները՝ երկուսն էլ Թեոդոսին ուղղված Հայոց ժողովի Թղթից են, այն էլ անմիջապես իրար կից, - և այս հանգամանքը կասկած չի թողնում, որ եղիշեն **դաստակերտ կայսերաց** կարդացել է հենց Տրդատի հրովարտակում: Իր բնույթով եզակի այս փաստը միանգամից անքակտելիորեն կապում է եղիշեի և Ագաթանգեղոսի պատմական Մատյանները միմյանց հետ:

Անհրաժեշտ է ընգծել, որ ինչպես Տրդատ թագավորն իր հրովարտակում (Ագաթ. § 127), այնպես էլ Արտաշատի ժողովականներն իրենց Թղթում «դաստակերտ կայսերաց» խոսքով նկատի ունեին ոչ թե ամբողջ Մեծ Հայքը, այլ III դարի վերջին հույների իշխանության տակ եղած «Փոքր Հայքը»՝ Եփրատ գետի արևմտյան կողմում, որը չէր մտնում Մեծ

<sup>1</sup> Եղիշէ. էջ 72: Գաղերովն հիշված է և Աշխարհացոյցում՝ Հին աշխարհի ծայր արևմուտքում՝ Իսպանիային մերձակից:

Հայքի՝ Տրդատի սեփական տերության մեջ և հռոմեական վիթխարածավալ կայսրության հետ համեմատած կարող էր պատկերավոր կոչվել «կայսրերի դաստակերտ»: Իսկ Թեոդոս կայսրին ոգեշնչելու համար էլ Թղթի հեղինակները ոչ միայն հիշեցնում էին նրա նախնիների փառքը, այլև նրան *մեծանուն* անվանելով շեշտում, թե երկրավորների մեջ չկա մեկը, որ դուրս գա նրա վիթխարի տերության դեմ<sup>1</sup>:

«Դաստակերտ մեծ և սիրելի» խոսքը վկայում է ոչ միայն այն, որ եղիշեն բառացի օգտվել է Ագաթանգեղոսի Պատմությունից, այլ որ Հայոց ժողովի գլխավորները իրենց պաղատական Թղթի հետ Թեոդոս կայսրին են ուղարկել հենց Ագաթանգեղոսի Պատմությունը՝ ցույց տալու համար, որ Հայոց աշխարհն իսկապես կոչվել է «դաստակերտ կայսերաց», ինչպես և Կոստանդնի և Տրդատի միջև կնքված դաշինքը, որի հնագույն վկայություններն են Ագաթանգեղոսի Պատմությունը և «Դաշանց թուղթը»՝ իբրև «գլխշատակարանս նախնեացն»: Եվ այդ դաշինքի փաստը ստուգելու համար Հունաց կողմից ևս «բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ գնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»<sup>2</sup>:

Այստեղից հետևում է, որ Ավարայրի պատմիչը, եթե նա իրոք հիշյալ Հայոց ժողովի Թղթի հեղինակն է, քաջատեղյակ է եղել Ագաթանգեղոսի Հայոց Պատմությանը և էապես օգտվել նրանից: Նույնիսկ եթե Հայոց ժողովի Թուղթը եղիշեի գրչի արգասիքը չէ, միևնույն է՝ խնդիրն այդ դեպքում ևս շահեկան լուծում է ստանում հօգուտ Ագաթանգեղոս-եղիշե աղերսի - կնշանակի՝ եղիշեի Պատմության միջոցով մեզ հասել է մի վավերական Թուղթ, որից ակնհայտ երևում է, թե դեռ Ավարայրի նախօրեին՝ 449 թվին Հայոց մեծամեծ նախարարներն ու եպիսկոպոսներն Արտաշատում ընթերցել են Ագաթանգեղոսի Պատմությունը և նրանից պատմական տվյալներ քաղել՝ Թեոդոս կայսերը հղած Թուղթը գրելիս:

Եվ այսուամենայնիվ, եղիշեի Վարդանանց Պատմության զանազան մասերի բաղդատումը Ագաթանգեղոսի Պատմության հետ վերջնականապես ի հայտ է բերում այն իրողությունը, որ հենց ինքը՝ եղիշեն քաջածանոթ է եղել Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի ավանդապատումին ոչ թե հիշյալ Հայոց ժողովի Թղթի միջոցով կամ որևէ այլ, մեզ անծանոթ աղբյուրից, այլ անմիջապես մեր ձեռքը հասած Ագաթան-

<sup>1</sup> «Չիք որ յերկրատրացս, որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայցէ» (եղիշէ, էջ 71): «Անարգել տէրութիւն» անիմաստ արտահայտություն է, որ ձեռագրերից անցել է տպագիրներին և թափանցել նույնիսկ Ե.Տեր-Մինասյանի քննական քննագրի մեջ: Ըստ իս, «անարգել» բառի փոխարեն եղիշեի սկզբնական քննագրում պետք է լիներ «անարդիլ» - վիթխարի, հսկայածավալ (տե՛ս Նոր քառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, էջ 115): Ուստի քննական քննագիրը պետք է ուղղել. «ձերում անարդիլ տէրութեանդ ընդդէմ դառնայցէ»:

<sup>2</sup> Եղիշէ, էջ 72:

գեղոսի Պատմությունից, և Վարդանանց Պատմությունը շարադրելիս հմտորեն օգտվել է նրա պերճ ու ծաղկուն ոճերից:

Եղիշե-Ազաթանգեղոս աղերսն ամբողջացնելու համար կարելի է մատնացույց անել բազմաթիվ լեզվա-ոճական նույնություններ ու նույնանման ինքնատիպ դարձվածներ նաև Եղիշեի Պատմության ամենատարբեր մասերից: Մի շարք նմանառճ արտահայտություններ ու դարձվածներ գտնում են Ազաթանգեղոսի ու Եղիշեի հենց առաջին էջերում, կարծես Վարդանանց պատմիչն իր երկը շարադրելուց առաջ աչքի է անցրել Ազաթանգեղոսի Պատմության մանավանդ Առաջաբանը և Առաջին գիրքը, ուստի Վարդանանց Պատմության սկիզբն էլ հատկապես ճոխացած է ազաթանգեղյան ոճերով: Ընդ որում, աչքի է զարնում Ազաթանգեղոսի և Եղիշեի պատկերավոր մտածողության հարազատությունը, որը հաճախ արտահայտվում է նույնանման համեմատություններով: Ուշագրավ է, որ մրրկածին օդովք հազվադեպ կապակցությունը երկու հեղինակների մոտ էլ գործածված է հենց Առաջաբանի սկզբնամասում.

#### Ազաթ., § 1

«/.../ի մէջ ընդոստոցեալ այլեացն որ ընդդէմ դառնան, մրրկածին օդովքն ի մարտ պատրաստին»:

#### Եղիշէ, էջ 5

«/.../և իբրև բարձրաթռիչս եղեալ՝ զամենայն վնասակար մրրկածին օդովք՝ անցանիցեմք»:

Ազաթանգեղոսի Առաջաբանում մարդու լսելիքը (ականջները) պատկերավոր կոչված է **աման պատգամաց** (պատգամների անոթ). սրան հար և նման Եղիշեն մարդու գլուխն անվանում է **աման խորհրդոց** (մտքերի անոթ).

#### Ազաթ., § 11

«/.../միայն յօժարութիւն կամաց սրտին՝ սիրով մատուցանել զլսելիս, հաւատովք ձգտեալ զականջս՝ աման պատգամաց»:

#### Եղիշէ, էջ 47

«առ շհանդութել սրտին իւրո՝ կոտորէր զգօրութիւն մարմնոյն, և ծակտէր զբազմաթեր աման խորհրդոցն»:

«Մրրկածին օդովք» արտահայտություն ունի նաև Գյուտ եպիսկոպոսը՝ «Իշին ի նա օդք մրրկածինք, շարժեցին և յուզեցին ի վերայ նորա զբազմութիւն այլեաց» (Թուրք Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ - Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, Ա, ԺԱ, էջ 21): Գյուտը այլ ոճեր ևս քաղել է Եղիշեի Նախաբանից. «այլ որ քաջն ղեգերեցան յուսումնասիրութեանն» (Կաղանկատուացի, էջ 23) - «Որպէս երևի ինձ և քեզ և այնոցիկ, որ ղեգերեցին յիմաստասիրութեանն» (Եղիշէ, էջ 4). «սկսանիմ, ուստի արժանն է սկսանել» (Կաղանկատուացի, էջ 18) - «սկսցուք ուստի արժան է սկսանել» (Եղիշէ, էջ 5): Եղիշեի այս խոսքը հավանել է նաև Վահան Գողթնեցու Վկայաբանության հեղինակը (VII դար). «պատմագրել, սկիզբն ամենելով ուստի արժան իսկ էր» - «Ողթք վասն չարեացն աշխարհիս Չայոց եւ վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնացոյ» («Սուիերք հայկականք», հտ. ԺԳ, Կեննտիկ, 1854, էջ 57):

Կողք-կողքի ցուցադրենք ևս մի քանի նմանատիպ, նմանառժ արտահայտություններ.

### Ազաթ., §22

(Չայոց Խոսքով Մեծ թագավորը Արտաշիրի դեմ տարած հաղթանակի առթիվ)  
«իրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արծակել, հրովարտակս առնել, յեօթն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կողո դիցն պաշտաման: նոխազօք

Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորովք!.../ ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք!.../ ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր!.../ և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր»:

### Եղիշէ, էջ 12

(Պարսից Չագկերտ արքայից արքան հռոմեաների և հոնների դեմ տարած հաղթանակի առթիվ)  
«անետաւորս առաքեաց ընդ ամենայն ատրուշանս աշխարհին իւրոյ. ցլուք սպիտակօք և գիսաւոր

առատացոյց զզոս կրակի. և խիտ առ խիտ թանձրացոյց անդոլութեամբ զպաշտօն պղծութեան իւրոյ. պսակօք և զիւր պատուովք մեծարեաց զբազումս ի մոգաց և զբազմագոյնս ի մոգպետաց»:

Պարսից արքա Արտաշիրը Չայոց Խոսքով թագավորին սպանելու համար Պարթև Անակին խոստանում է բարձր պարգևներ – հար և նման ռժով էլ Պարսից արքայից արքա Չագկերտը պարգև խոստանալով՝ իրապոտում ու հորդորում է հայ նախարարներին ընդունելու մոգության կրոնը.

### Ազաթ., §26

«Խօսել սկսաւ (թագաւորն Արտաշիր) ընդ նմա (Անակայ) և ասէ. Եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ՝ զքնութիւնն պարթևական, զձեր սեփական Պալիան ի ձեզ դարձուցից, և ջեզ թագ եղեալ փառաւորեցից, և երևելի և փառաւոր ի թագաւորութեանս ինձ արարից, և երկրորդ ինձ կոչեցից»:

### Եղիշէ, էջ 17

«և այսպէս իրապուրէր և յորդորէր հանապազ (Չագկերտ զտմանս ի նախարարացն Չայոց). Եթէ միայն. ասէ, զօրէնս մոգութեան յանձին կալջիք. և զձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցիք ի ժշմարտութիւն երեւելի մերոց դից օրինացս, ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցից հաասար իմոց (տպ. իմոյ) սիրելի նախարարացս, և առաւել ևս զանցուցից»:

### Ազաթ., § 28

«Պարթևն (Անակ) եղբարբն իւրով հանդերձ!.../ Եկեալ յանդիման եղև թագաւորին Խոսքովու յուտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս Արքայութեանն Չայոց»:

### Եղիշէ, էջ 75

«(մարգպանն Սերուխտ) փութանակի անցանէր ընդ մեծ զետն Կոտ անուն, և պատահէր նմա մերձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից»:

Վարդանանց պատմիչը Պարսից արքայից արքա Յակեբերտին առավելագույնս բնութագրելու համար շատ հաջող կերպով փոխ է առել Ագաթանգեղոսից հեթանոս արքաների ինքնամեծար ոճերը. Յակեբերտի հրովարտակում հմտորեն օգտագործված են Յայոց հեթանոս Տրդատ արքայի հրովարտակների սկզբի ու եզրափակիչ ողջույնի բանաձևերը.

#### Ագաթ. § 131

«Ողջ լերուք ի դիցն օգնականութենէ դուք ամենեքին/.../դի մեք գլխովին արեաց իսկ ողջ ենք»։ Յմտ. Տրդատի երկրորդ հրովարտակի սկիզբն ու վերջը. (§ 134, 136):

#### Եղիշէ, էջ 9

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ և անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ ենք դիցն օգնականութեամբ»:

«Գաղտածիգ նետ» և «ծածուկ նետ» համարժեք փոխաբերությամբ Ագաթանգեղոսը և Եղիշեն պատկերավոր արտահայտում են Յոռմայեցվոց արքա Դիոկղետիանոսի և Պարսից արքա Յակեբերտի նյութած գաղտնի որոգայթները ընդդեմ քրիստոնյաների և, ինչպես այստեղ Դիոկղետիանոսը կոչված է *չարի աման*, այդ նույն բառերով էլ Եղիշեն է որակում Վասակ մարզպանին.

#### Ագաթ.<sup>1</sup> § 141

«Իսկ իբրև տեսին առաքինիքն զգաղտածիգ նետս թշնամոյն, չարութեանն. որ ի ծածուկն սովոր էր ձգել ի սուրբսն քրիստոսասէրսն. աման չարի գտեալ զթագատրն»:

#### Եղիշէ, էջ 16

«սկսաւ ծածուկ (Յակեբերտ) նետիւք խոցուտել զմիտս իւրոյ և անբժշկական վէրս յոգիս և ի մարմինս տեսանէր»:

#### Եղիշէ, էջ 91

«Ձեռն էարկ կամակորութեամբ և եմուտ յորդէգրութիւն դիապաշտութեանն, և եղև աման չարին»:

#### Ագաթ. § 142

«/.../որ ի նմանէ (Դիոկղետիանոսէ) անցանէր ընդ եկեղեցիս Աստուծոյ»:

#### Եղիշէ, էջ 15

«/.../որ ի նմանէ (Յակեբերտ) ընդ սուրբ եկեղեցիսն էանց»:

<sup>1</sup> Ագաթանգեղոսի «զգաղտածիգ նետս թշնամոյն, որ ի ծածուկն սովոր էր ձգել» արտահայտությունը գործածել է Փարպեցին իր «Պատմութիւն Յայոց»-ի ԻԳ գլխում «Եւ ընկալեալ զայսպիսի հրովարտակ ամենայն Յայոց առգանուոյն/.../ ծանուցեալ և զառ ի ծածուկ նետս թշնամոյն, զոր ձգէր խորամանկութեամբ յանարատ հօտն Քրիստոսի» (Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Յայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ.Տէր-Մկրտչեան եւ Ստ.Սալխասեան, Տփղիս, 1904, Տեսիլ Սահակայ եւ Մեկնութիւն տեսեանն (այսուհետ՝ Փարպ.) էջ 44):

Եղիշեի մոտ Հայաստան ուղարկված Պարսից մոզպետը, Վասակ մարզպանի հետ զրուցելիս, քրիստոնյա հայերի համառությունը ցույց տալու համար օգտագործում է այնպիսի արտահայտություններ, որոնք առկա են միայն Ազաթանգեղոսի մոտ՝ Դիոկղետիանոս կայսեր հրովարտակում՝ ողղված Հայոց Տրդատ թագավորին և որոնցում Դիոկղետիանոսը նկարագրում է Հունաց աշխարհում քրիստոնյաների դեմ սկսած իր հալածանքներն ու նրանց համառությունը.

**Ազաթ., § 153**

«/.../վասն զի և զմեր զնախնիսն, և զառաջին հարսն զթագաւորսն, զնոսա ոչ դառնացուցեալս ձանձրացուցին. նուազեցուցանել ի ոչ մեռանելոյ»:

**Եղիշէ, էջ 60**

«(թագավորն Շապուհ) դառնացաւ ձանձրացաւ յանձն իւր. և կարաց զի մեր սուրբս թոնցան, և նոքա բազմութենէն/.../Սուրբ սպանողացն զարհուրեցան ի թոնցան, և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան»:

**Ազաթ., § 154**

(Դիոկղետիանոս առ Տրդատ)  
«Թէպէտ և ազգի ազգի պատուիս տանջանաց ի վերայ եղաք՝ առաւել յորդեալ տարածեցաւ ևս տոչորեալ յորդագոյնս տարածեցաւ աղանդ, նոցա (քրիստոնէից)»:

**Եղիշէ, էջ 17**

«/.../քանզի տեսանէր (Յազկերտ) զքրիստոնէութիւն, որ օր քան զօր կողմանս հեռաւոր ճանապարհին ընդ որ ինքն անցանէր»:

**Ազաթ., § 203**

«Եւ զի՞ մի ըստ միոջէ թուեմ. զի զամենայն բազում տեղիք այն են, որ իմ խաղաղութեամբ է հասեալ/.../»:

**Եղիշէ, էջ 16**

«և զի՞ մի մի թուիցեմ, այլ զանարժանսն յառաջ մատուցանէր»:

**Ազաթ., § 760 ՃԴ**

«Այլ ինքն (ս. Գրիգոր) միայն առանձնացեալ, զմի մի իւրաքանչիւր ի սրբոցն առեալ յիւրաքանչիւր արկեղ դնէր՝ զանուանս իւրաքանչիւր հանդերձով և իրեանց կազմութեամբ պնդէր (ծծ.՝ պատէր), և կնքէր քրիստոսանշան կնքովն»:

**Եղիշէ, էջ 182**

«և զամփոփումն սուրբ ոսկերաց նոցա ոչ խառն ի խոտն ի մի վայր ժողովելով, այլ զմի մի ի նոցանէ ուրոյն ուրոյն ի վեց տապանս ժողովեալ էր, և իւրաքանչիւր ոռեալ և ի վերայ տապանացն նշանակեալ էր: Եւ զկապանսն երկաթիս ընդ իւրաքանչիւր ոսկերսն եղեալ էր/.../ որպէս և զհանդերձս զիւրաքանչիւր տապանի նշանակեալ էր»:

**Ազաթ., § 773**

«Եւ դէմք երեսացն (Տրդատայ) դարձան յիւր իսկ կերպարանսն, և մարմինն փափկացեալ մատաղացեալ լինէր իբրև գառօրեայ մանկան ծնելոյ»:

**Եղիշէ, էջ 195**

«/.../զի և որ ծերագոյնքն էին ի նոցանէ (Նախարարացն Յայոց), փափկացան մատաղացան մանկացան»:

**Ազաթ., § 797**

«Ի վաղնջուց հետէ կորուսեալք (պետք է ուղղել ըստ եղիշէի՝ «կուրացեալք»<sup>1</sup>), տգիտութեամբ մեղացն պաշարեալք, մառախլապատք, միգապատք, ավշեալք, ոչ կարացեալ հայել իմանալ նկատել, գարեգական արդարութեան տեսանել»:

**Եղիշէ, էջ 55**

«Նորք ի վաղնջուց հետէ էին իսկ կուրացեալք, դուք զհա՛րոզ զկնի կուրացն կուրացարուք»:

**Ազաթ., § 823**

«/.../և իբրև ի քնոյ ընդոստուցեալ, զի գիտասցիք զզգաստութիւնն, որ արժանն է»:

**Եղիշէ, էջ 15**

«Ոչ ի կարծ ընդոստուցեալ, և ոչ ի լուր գարթուցեալ»:

**Ազաթ., § 824**


«Չի գոր, կափուցեալ զաչս ձեր, և համարէիք խաւար՝ ծագեաց երաց և լուսատրեաց գտնանելիս ձեր, մերկեաց ի ձէնջ զզգեցեալ զխաւարն հեթանոսութեան, և զճառագայթարձակ զզեցոյց զպատմութեանն»:

**Եղիշէ, էջ 54-55**

«Կափուցէք զաչս լընթերցոածոց, խցէք զականջս ի լսելոյ/.../խաւարն արտաքին նոցա՝ թանձրացեալ պահի, դուք լուսազգեստք՝ ընդէ՛ր յուղարկեցայք ընդ՝ նոսա ի նոյն խաւար»:

Սույն զուգադիր հատվածում Ազաթանգեղոսի դիմաց Եղիշեն հավելյալ ունի՝ «Եւ զկապանսն երկաթիս ընդ իւրաքանչիւր ոսկերսն եղեալ էր, քանզի դահձացն ի բաց ընկեցեալ էր» («Եվ երկաթե կապանքներ էին դրված յուրաքանչյուր կմախքին, քանզի դահիժները ցրիվ էին տվել (նրանց ոսկորները)»): Այստեղ Եղիշեն խուժիկի պատմածը սուրբ Ղևոնդյանց նահատակների նշխարներն ամփոփելու մասին ներկայացրել է Ազաթանգեղոսի Պատմության ռժով, քանի որ երկու հեղինակնե-

<sup>1</sup> Եղիշէի օգնությամբ հնարավոր է դառնում ծշտել Ազաթանգեղոսի քնագիրը - «կուրացեալք» իմաստն ավելի է պատշաճում այստեղ, քան «կորուսեալք» Տրդատ թագավորն ուզում էր ասել, թե «Վաղուց մեզ՝ հեթանոսներիս կուրացրել էր տգիտութեամբ մառախլուն ու մեզը, որ խանգարում էր հայել իմանալ նկատել, գարեգակն արդարութեան տեսանել»։ Կեսարիայի արքեպիսկոպոս Ղևոնդեսին հղած նամակի այս խոսքերը քաղված են Ազաթ., « 235-ից, որտեղ խոր փորապից նոր դուրս եկած Գրիգորը քարոզում է իր շուրջը հավաքված հեթանոս հայերին. «մառախլոտ ստուերացն խաւարին թանձրութեան նստեալ է ի վերայ ձերոյ աչաց սրտին, ոչ կարացեալ հայել իմանալ, ածել զմտաւ, և զկարիչն ճանաչել»:



րի մոտ էլ խոսքը վերաբերում է միևնույն նյութին՝ սուրբ Ղևոնդյանց և սուրբ Յոհաննիսյանց նշխարների ամփոփմանը, որոնց հոշոտել էին կրակապաշտ Յազկերտի և մյուս կողմից հեթանոս Տրդատի դահիճները: Բայց, համեմատելով հայերեն Ագաթանգեղոսի և Սուրբ Գրիգորի հունարեն Վարքի համապատասխան հատվածները, պարզվեց, որ այստեղ, ինչպես և Եղիշեի մոտ, Յոհաննիսյանց կոյսերի նշխարները ամփոփելիս Սուրբ Գրիգորը «երկաթե գամերով գամում է նրանց տապանները»: Ակնհայտ է, որ այդ նախադասությունը եղել է նաև հայերեն Ագաթանգեղոսում և բաց է թողած գրիչների մեղքով – դրա մասին է վկայում «Խրաքանչիւր հանդերձով և իրեանց կազմութեամբ պնդէր» աղծատ խոսքը Ագաթանգեղոսի հատվածում: Ուշագրավ է, որ «պնդէր» բայի դիմաց Ագաթանգեղոսի երկու ձեռագիր ունեն «պատէր» – վերջին բայը, սակայն, մնացորդն է այն բաց թողած նախադասության, որ առկա է հունարեն Վարքում, որի հիման վրա էլ վերականգնում են արտագրող գրչի բացթողածը. «Խրաքանչիւր հանդերձով զոսկերսն սրբոց պատէր և երկաթե կապանօք իրեանց կազմութեամբ պնդէր»: Ըստ երևույթին, Ագաթանգեղոսի սկզբնական ձեռագրում տողերն ավարտվել են «պատէր» և «պնդէր» բայերով, որոնց նմանությունը շփոթեցրել է արտագրող գրչին և պատճառ դարձել մի ամբողջ տող բաց թողնելուն: Գալով Ագաթանգեղոսի բնագրից օգտվելու փաստին հարկ է նշել, որ այդ երկը V դ. սկզբից ի վեր դասավանդվում էր Յայոց դպրոցներում, որոնցից ելած աշակերտները՝ հետագա մեր նշանավոր մատենագիրները գոց գիտեին նրա շարադրանքը, ուստի բնական է, որ Յոհաննիսյանց կոյսերի նշխարների ամփոփումը և Պարսկական անապատում հոշոտված սուրբ Ղևոնդյանց նշխարների ամփոփումը Եղիշեն հարկ է համարել շարադրել ագաթանգեղյան բառուբանով:

Այնպես որ, Եղիշեն, թեև Գրիգոր Լուսավորչի անունը չի տալիս, բայց Վարդանանց Պատմության մեջ՝ հակառակ Մալխասյանցի ենթադրության, կրկնում է Ագաթանգեղոսի Պատմության բազմաթիվ նախադասություններ, համեմատություններ և ոճական դարձվածներ, ինչպես և հեթանոսական շրջանին բնորոշ արտահայտություններ, որ գործածում է արքայից արքա Յազկերտի հրովարտակներում, բայց քաղել է Ագաթանգեղոսի Պատմության մեջ եղած հեթանոս արքաների՝ Խոսրով Մեծի, Տրդատի, Դիոկղետիանոսի հրովարտակներից, քանի որ հայերեն Ագաթանգեղոսի հեղինակը ժամանակով ավելի մոտ էր կանգնած նախագրային շրջանին և տեղյակ էր հին բանավոր խոսակցական ոճերին և հեթանոսական արքունիքի արարողակարգին: